

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱԶԻՐԻ, Ապառն փողոց

ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ԺԻՂՏ ղեկավար

Pour les annonces s'adresser

à la Rédaction du Journal PHAROS

LE CAIRE — RUE ABDIN

vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

ՄԵԿ անգամի համար տողը 3 ՂՂ. ողջ.
ՄԵԿ անգամի առաջին ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽԳԱՐԱՆ ԶԱՄԱՆ

Տարեկան ՂՂ. ողջ 100

Վեցամսեայ » 50

Եռամսեայ » 30

ՕՏԱՐ ԵՐԿՐԱՆԵՐՈՒ ԶԱՄԱՆ

Տարեկան ՁՐ. 26

Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՂՂԱՌԱՄ

ՈՒՆԻ Ե՝ ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

Լ. ՐԱ. Գ. Ի. Ր.

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ՇՏԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱՂՓԻԱՐ

ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ

(Շարունակութիւն ճախորդ թիւէն)

Ինչ ընելու է մեր դպրոցները լա-
րեկարգելու համար: Ապահովապէս
պէտք է ամեն բանէ առաջ մէջ տե-
ղէն վերցնել սա՝ հոգաբարձուական
դրութիւնը որովհետեւ ամեն անգործ
որ այդ պաշտօնին կողմէն են մին-
չեւ այսօր, այնպէս մը խնամած են
վարժարանները ինչպէս կը դարձա-
նեն տեսակ մը հոգեւոր... յոգացա-
ւորը և կամ աւաղախտերը: Բան մըն
է որ կրնան, առանց ըրածնուն գիտակ-
ցութիւնը ունենալու: Եթէ յաջո-
ղին՝ լաւ. իսկ եթէ չի յաջողին
«բազդ չունիք եղբ» կըսեն և կը
բաշտին մէկ կողմ:

Մանկավարժութիւնը և դաստիա-
րակութիւնը մասնագիտութիւն մըն է
որմէ առ հասարակ զուրկ գտնուած
են մեր հոգաբարձուները:

Ֆրանսերէն մը կամ արաբերէն մը
գիտնալ, լաւ. գծագրութիւն չիկնել,
դրան կամ... պատուհանի պաշտօն-
եայ ըլլալ, բարեկեցիկ դասի մը
պատկանիլ, արտօն մը ունենալ, լաւ
հագուել, աշխոյժ, հայրենասէր,
գիւրաթեք, բարի և երիտասարդ ըլ-
լալ, այս ամենքն ալ զատ զատ յատ-
կութիւններ են զորս ունենալ կ'ար-
ժէ. բայց եթէ այս ամենը՝ մէկ ան-
հատի վրայ ալ ժողովուած ըլլան,
գարձեալ չեն տար մեզի այն հոգա-
բարձուի տիպարը որուն պէտք ու-
նինք բարեկարգելու համար մեր
ազգային վարժարանը՝ Գալտեանը,
որ Քրիստոսի երկրորդ գալստեան ա-
տեն իսկ մարդ ըլլալուն կը տարա-
կուանէր եթէ խաթիւ համար հոգա-
բարձուներ պաշտօնի կոչելու մեր
սխալմը այսպէս շարունակենք:

Կը հասկնանք և նոյն իսկ կը նե-
րնք որ ազգային սնտուկը յանձնուի
այսինչ կամ այսինչ պարոնին, բայց
մեր ազգային մանկուսին ապագան
որ շատ աւելի կ'արժէ այն սնտու-
կէն և որ ատկէ շատ աւելի պիտանի
է և նուիրական, օհ, ատկեայ կը
պահանջենք որ յանձնուի արժանի
և խղճահար ձեռքերու, որովհետեւ
այդ մեր յոյսն է, մեր էն գեղածի-
ծաղ և սիրելի յոյսը:

Ներկայ հոգաբարձութեան դէմ ու-
նէ մասնաւոր առարկութիւն չունինք,
որովհետեւ համազուած ենք որ այդ

խեղճերը ձեռունուն եկածը կ'ընեն
և բնաւ տարբերութիւն չունին այն
ամեն հոգաբարձուներէն որոնք իրա-
րու յաջորդած են Տարա-էլ-Կինէնա-
յի այդ անկիւնին մէջ:

Դպրոցին չէքքին պէս, հոգաբար-
ձութեան սխալմէն ալ հիմէն փլցնե-
լու է:

Մանկավարժութեան մէջ փորձ և
դաստիարակութեան մէջ վարժ անձ-
նաւորութիւններու և կամ անձի մը
պէտք ունինք, փրկելու համար մեր
զաւակներուն վիճակը որ արտուր է,
յուսահատական, ամօթաբեր:

Իրաց այս վիճակը չի կրնար չա-
րունակել և պէտք չէ որ շարունակէ:
Հոգաբարձուները կուրի և վէճի
տեղի տալէ զատ ուրիշ բանի չեն
ծառայած մինչև այսօր, առանց գո-
նէ միւս կողմէ մանանխոյ հատի չափ
օգտակարութիւն մը ցոյց տալու:

Եւ յետոյ, ինչ են այդ ամեն ծրա-
գիրները, ջանքերը, որով կուզուի
կառավարական կամ տեղական պրա-
կտիկութիւն ուղղութեան վրայ ձեռն
և մեր դպրոցները որ սակայն տար-
բեր նպատակի մը համար հիմն-
ւած են:

Բարեխառնակ Գալտեան Դարա-
պետ ուղան՝ էֆէնտիներ, պէյեր, փա-
շաներ հասցնելու համար չէ որ Ծէխ-
էթմանը կտակած է ազգին:

Մեծ վարդէն՝ հայեր, ճշմարիտ
հայեր արտադրելու համար այդ դրա-
կոցին զազափաբը յղացած է:

Հետևաբար սրբապաշտութիւն մըն է
երբ կուզուի այդ նպատակը անտես
առնել և չի գործադրել զայն ինչպէս
փափաքն էր կտակարարին:

Եւ մանաւանդ այս երկրին մէջ ուր
երբեմնի քաղաքական տնտեսական
հարցերն չեն գիտեր, կը դարձանաք
թէ ինչպէս ներքին է վարկեան մը
իսկ մտածել թէ Գալտեան հիմնա-
կութիւնը հայ դպրոց մը ըլլալէ դադ-
րեցնել կարելի է միջազգային դպրոցի
մը վերածելու համար:

Ամեն բանէ առաջ և ամեն բանէ
վեր, հոգ յաճախող մանուկներուն
ներշնչելու է հայ ոգին, սորվեցնելու
է անոնց հայ լեզուն, հայ գրակա-
նութիւնը, վարժեցնելու է զանոնք
հայ բարեքերուն մէջ, հայոց պատմու-
թիւնը՝ իրենց ազգութեանը պէտք է
ըլլայ և հայաստանը իրենց իտեալը:

Առանց ասոնց այդ տղաքը պէյե-
սիներ պիտի ըլլան, որոնք մինչև այ-

սօր պատուական բաղադրանքներ թե-
րեւս եղած են, բայց երբեք հայ չեն
եղած ինչ որ շատ ցաւալի է և ար-
գաստելի:

Վանդի կարապետին փափաքն ե-
ղած է հայութիւնը փայլուն վիճակի
մէջ պահել, Եֆէպտոսի մէջ և պէտք
է որ յարգուի այդ կամքը բանի որ ա-
նկալ կուզայ այնպիսի մէկէ մը որուն
կը պարտինք մեր ժամն ալ, մեր դպրո-
ցն ալ, ինչպէս նաև այն ամեն կալ-
ւածները որոնցմով կը մատակարար-
ուին մեր ազգային հաստատութիւն-
ները:

Փոխանակ հոգաբարձուներու, ո-
րոնց յանձնելու է մեր դպրոցները
բարեկարգելու գործը:

Ահա այդ պիտի ըլլայ մեր յա-
ջորդ յօդուածին նիւթը:

Յ. Ա.

(Շարունակելի)

ՄԵԼԻՄ ԱՂԱՆ

(ՊԱՏԿԻՐ ԱՐԱՐԱՅԱՆ ԿԵՆՍԱԿԱՆ)

Հեռուէն, շատ հեռուէն աւազի ու արևի
խորհրդաւոր աշխարհներն անցեր եկեր էր
մեր երկիրը այդ բարձրահասակ, խոր ու
անուշ աչքերով ծերունին: Փաթթուած իր
արաբական պոչունովն մէջ, պատուհանին
առջև ծալապատիկ նստած, նարկիլէին փո-
ղը բերին, մտախոհ ու թաղմալից, նա
կը մարմնաւորէր իր անձին վրայ անպա-
տի ժողովուրդներուն յատուկ այն մեղի ու
տխուր կերպարանը, որ չգիտեմ ինչ ա-
նուշ, երազուն ու բանաստեղծական բան
մը ունի իր մէջ:

Իր ներքին-մարդը այդ չէր եղած սա-
կայն, իր բոլոր կենսքը շարք մըն էր ա-
հաբիւ կոխներու և փառաւոր յաղթանակ-
ներու:

Հզօր ցեղապետ և ազգեցիկ իշխան, ահ
ու սարսափն էր արաբական այն բոլոր վայ-
րենի ցեղերուն՝ որոնք իրարու դէմ մղուած
մշտական զանազային կռիւներով արեան ու
կոտորածի թատր մը դարձուցեր էին Արա-
բիան... Իր օրով արդարութիւնը գեղեցիկ
բառ մը չէր լսի. Հաւատարմի ու եռան-
դուն հետևող Մեծ մարգարէին բարոյած
սկզբունքներուն, երբեք չէր ներքին ունի
բաւական, և երկա՛ր տարիներու արիւն
ու արցունքէ ետքը՝ իր տերութեան ընդար-
ձակ սահմաններուն մէջ խաղաղութիւնն ու
Մեր պայծառ և անուշ շողերով կը ճառա-
գայթէին զրկուածներուն, տկարներուն ու
գոթազգներուն վրայ:

Եղաւ սակայն օր մը որ, Սելիմ աղան
կռիւներու ամենէն սոսկալին, ամենէն ա-
րիւնահեղը, և ամենէն եղբակա՛նը միեց
իր կեանքի այն տարիներուն մէջ՝ յորս
անհունապէս դահ, և իր ժողովուրդին եր-
ջանկութեամբ լիովին երջանիկ՝ կը հաւա-
տար թէ արժանաւոր և արքար հանդիսա
մը ալ վերջապէս կ'սկսէր իր ծերութեան
օրերուն համար:

Այդ օրը ամբողջ Արաբիան զոդաց...
Դաշտերն ու անապատները արեամբ կար-
մեցան...

Օ... մէկ աւելի բանաստեղծներ մեկա-
մաղձիկ ու խորհրդաւոր «եա՛» լէյլիներու
մէջ երգեցին այդ կռիւը, և մէկ աւելի
«մէտտահ»ներ արաբական նեղ ու տխուր
որձաբաններու մէջ, ծխախոտի և հաշիշի
ամպերով վերացած՝ պատմեցին հէքեաթը
այդ արեւոր անցքերուն...

Սոսկ նախանձն էր պատճառը պատե-
րազմին, նախանձն ու ատելութիւնը որ
տարիներէ ի վեր կը կրճէին Սելիմ աղայի
վայրագ հակառակորդին, Սիտի-Խպրահիմի
սկ սիրաբ:

Իր ցեղը կ'ատէր զինքը, վասնզի բար-
բարոս և անգութ էր, բայց կը վախնար
իրմէ, և կ'ախածէր մանաւանդ այնու՝ զի
ցեղապետի տիտղոսին կը միացնէր և չէյի
նուիրական պաշտօնը:

Բնականէն ներամիտ ու խորամանկ, Սի-
տի-Խպրահիմ՝ կը պահէր ժողովուրդը կրօ-
նական ծայրայեղ մոլեռանդութեան մէջ,
վասնզի հոգ կը գտնէր իր ուժին գաղտնի-
քը, և ատով միայն հաստատուն և տեսա-
կան կ'զգար իր իշխանութիւնը: Ըմբռնելով
միկնոյն ժամանակ նկարագրին գերազանցու-
թիւնն ու բարձրութիւնը Սելիմ աղայի, որ
կը պաշտուէր իր ժողովուրդէն իբրեւ հայր
գործադուր, և որը իր ներշնչած խորունկ
ու անկեղծ սիրոյն մէջ միայն կը փնտէր
ուժ, մեծութիւն և փառք, Սիտի-Խպրահիմ
կը տանջուէր հոգեւոր... վրէժնորդութեան խօլ
իզներ կը բռնկէին կոտորածի տակ, մէկ
աւելի վայրագ խորհուրդներ կ'որոճար, ծը-
րադիրներ կը յղանար առաջապէս համար
իր վեհօգի թշնամին, յարմար առթիւն կըս-
պաւէր զայնս իրագործելու համար. և ա-
ռիթը ինքը ստեղծեց. այդ եղաւ պատե-
րազմը...

Կտրուած զուրկներ նիգալներու ծայր
անցած իբրեւ յաղթութեան նշան, ջարդ ու

Գ. Է. ՄԵԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՑՈՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՑՆԵՐՈՒ

փշուր եղած մարմիններ ցիրուցան դաշտ-
րուն վրայ, ջախջախուած կործանել զորս
թափուած թռեք ու սիրտեր արեւուն տակ,
օ՛, սարսափելի՛ անգլխութիւնը բարբարոս
ժողովուրդներու... Արեւան գետեր կը վա-
զենար... կատաղելով կը տեսնէր զիւցաղ-
նական զինավորութիւնը Սէլիմ աղայի պա-
տերազմիկներուն, որոնց կառաջնորդէր քա-
ջարի Ալին, իր հակառակորդին անդրանիկ
տղան, իր հօրը աչքին լոյսն ու բոլոր ցե-
ղին պարծանքը... օ՛ զայն սպաննել...
այդ էր իր երազը... իր տենջանքը, և ատ-
կէ աւելի զօրեղանքին վրէժնորդութիւն մը չէր
կարելի երևակայել, վասնզի Սէլիմ աղան
այդ աղուն կենսաբոլոր կապէր, անո՛վ իր-
ջանիկ, անո՛վ հպարտ, հետեաբար և զայն
կորսնցնելով ջախջախուած կըլլար իր ծնո-
ղական սիրոյն և տոհմային հպարտութեանը
մէջ։ Օ՛... գեղեցիկ, շատ գեղեցիկ էր այդ
պատանին կրակոտ, խոշոր աչքերով, հո-
յակապ հասակով, լայն կուրծքով, արի
պատերազմիկ, արժանաւոր յաջորդ իր վե-
հանձն հօրը... Մէկէ աւելի շէյխեր կան-
ուանէին զայն Արաբիոյ ամենէն աղուր ծա-
ղիկը։

Եւ ահա, ո՛վ տխուր յաղթանակ չա-
րին... կուսյն ամենատաք միջոցին, երբ Ալի
մոռնալով խոհեմութեան յորդորները աւելի՛
և աւելի՛ կը մոտենար թշնամի բանակին,
Սէլիմ աղա տեսաւ զայն, իր Բինիամինը,
Արաբիոյ ծաղիկը, ինկած անագորոյն թըշ-
նամիկն ճիւղաններուն տակ... Ըմբռնեց այդ
թանկագին զինուն սպաննացող ահաբի վը-
տանքը, մինչև ոսկորներուն ծուծը դողաց.
և այդ հօր մարդը ինքզինքը մոռնալով, իր
հպատակներուն առջև ինկաւ գետին ու լա-
ցաւ...։

Մէկ կողմէն ծնողական սէրը, իսկ միւս
կողմէն տոհմային արժանապատիւութիւնը և
իշխանական հպարտութիւնը ամենէն բուռն
պայքարը կը մղէին Սէլիմ աղայի սրտին
մէջ...։ Ծնողական Սէրը յաղթանակի տա-
րու սակայն, ու ոտքի տակ առնելով և՛
արժանապատիւութիւնը, և՛ հպարտութիւնը, զի-
ջողութեան և աղաչանքի թույլ զրեց թըշ-
նամիկներու էն վատին, և շուրջ խոզրեց իր
զաւակին համար...։

Հեռուն՝ իր արծուի նայուածքը յառած
անքնթիւ թշնամի բանակին, Սէլիմ աղա
անձկութեամբ դողողացող կուրծքովը կ'ըս-
տէր...

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՍՍ» Ի (23)

ԺԸՂԱՆ ՏԻՂԻԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇՆՁՈՒԱԾ ՂԷՊ

ԳԼՈՒԽ Է.

«Դիտեմ որ արիասիրտ ես, էապէս պար-
կեշտ բնասութեան տէր, թեթեալարու-
յութեան և պշտասիրութեան անընդունակ,
շատ հպարտ, պատուոյդ նախանձախնդիր,
բայց զիտեմ նաև որ առատասիրտ ես և
պարզասիրտ, ինքնակամ և անձնուրաց։

«Այդ բրէնսը երիտասարդ է, յանկուցիչ,
շատ գեղեցիկ. այդ անգամ շատ է խեղճ
պզտիկ միամիտ և հնգաբարոյ աղջկան մը
սիրտը խորտակելու համար։ Միայն իր

պատեր...։ Կեանք թէ մահ վճռուած էր
արգեօք իր որդւոյն...։

Մէկալ ամբողջին վրայ երևաց Սիտի-
իպրահիմի բարձր ու չոր հասակը տնկուած
մերկ ծառի մը պէս։

Պաղ քրտինք մը սղողեց Սէլիմ աղայի
ճակատը։

Քանի մը վայրկեաններ ևս սահեցան դա-
րերու չափ երկար...։ ու մէկէն թշնամի
բանակը պարզեց կարմիր դրօշակ մը խոր-
հրդաւոր գրեթով ծածկուած, դա՛ հաշտու-
թեան նշան էր...։

Սէլիմ աղա խնդութեան գինով, յառաջ
վազեց, թեաքաց, իր որդին գրկելու տն-
ջովը բոցավառ։ Սիտի-իպրահիմ ամբողջին
վրայ լուռ ու անշարժ կը կենար արձա-
նի պէս...։

— Զաւակ... գոչեց Սէլիմ, առ'ի՛ր զա-
ւակս...։

Սիտի-իպրահիմ ծնեցաւ, պարտուել մէջ
փաթկուած մարդկային կերպարանք մը վեր-
ցուց։

— Ահա՛ զաւակդ, ըսաւ, և նետեց զայն
անոր գրկը...։

Անկաման ցնցումէն, պուրնուզը բացուեց
էր... տարաբաղ չալըր քստմեցաւ ու մա-
ղերը ցցուեցան զինուն վրայ...։ իր որդւոյն
խաշուած ու քրքրուած դիակը սեղմեր էր
թիւերուն մէջ...։

Ի՞նչ կատաղութեամբ ու յուսահատու-
թեամբ աչքերը դէպի ամբողջ վերցուց։ Սի-
տի-իպրահիմ, յաղեցած վրէժնորդութեան
զազանային գոհունակութեամբ, զիւսկան
քրքրելով մը կը խնդար...։

Սէլիմ աղա ջղային տագնապ մը ունե-
ցաւ և նուազած ինկաւ Ալիի գիւղիկին վրայ։

Օ՛, հանդիսաւոր եղաւ թաղումը Ալիին
... ամբողջ Արաբիան ոտքի վրայ էր, շէյ-
խերու ամենէն յարգելիները կ'առաջնորդէին
զազաղին, սեպուղու լալկան կիներու գուն-
դեր կ'ողջային մահը Արաբիոյ ծաղիկին,
լաց ու կոծ մինչև երկինք կը բարձրանար,
և արձագանքը կը կրկնուէր դաշտերուն ու
անապատներուն խորքեր...։

Սէլիմ աղա չլացաւ, այլ նա աւելի՛ ա-
հարկու եղաւ քան զօրեղը. երգութեամբ
Ալիահին անունովը ի սպառ ջնջել Սիտի-
իպրահիմի ցեղը, և իր երգումը պահեց
աւա՛ղ գուցէ չափազանց խնայողութեամբ...։

Արեւան գետեր անգամ մըն ալ ողողեցին
Արաբիան և այն ազնիւ ու բարի իշխանը

տիտղոսը բաւական է շատ մը կիներ հը-
մայելու համար, և եթէ քու հանձնարեղ ըզ-
գաստութիւնդ, քու արդարակորով միտքդ
կ'ապահովեն զքեզ այդ ունայնութեանց դէմ,
սակայն այնչափ հզօր գուցէ չկարենաս ըլ-
լալ աղին խօքի մը, քու նայուածքիդ
կառչած խոռվայոյդ նայուածքի մը դէմ ինք-
զինքդ պաշտպանելու համար։

«Ա՛հ, ո՞վ գիտէր...։ Ես ըսեմ՝ կ'երեւա-
կայի օրէքթիներու մէջ մեզի ներկայացուած
փաշաներուն նման փաշա մը, ծիծաղելի և
տկարամիտ կայ մը, որ խաչուէր և վար-
դի անուշով կ'ապրէ, անուշաբոյր գոլորշի-
ներու մառախուղի մը մէջ տեղ, տգէտ մեր
լեզուին և մեր սովորութիւններուն, և ահա
այդ բոլորովին այժմեական փաշան Բարիւ-
ցիի մը պէս Պրանսիոնէն կը խօսի, զգեստ-
ները Լոնտրա շինել կուտայ և ձիամրցանքի

վշտէն ու վայրոյթէն յիմար դարձած, Լէնկ-
թիմուրի պէս վայրագ, արիւն լոգանքներ
ըրաւ, իր թշնամույն արիւնը խմեց, ձեռ-
քերովը շօշափեց զայն, սարսափեցաւ զա-
զանային հեշտութեամբ մը, կարմիր կա-
թիլները մի առ մի վազցնելով մատերուն
ծայրերէն. այնքա՛ն ահաբեկու եղաւ ան իր
ցաւին ու վրէժնորդութեանը մէջ...։

Սուլթանը սարսափեցաւ Արաբիոյ այդ
սպաննալից ու ահեղ շարժումներէն, ազ-
դեցիկ փաշաներ գրկեց, որպէսզի խուժա-
բարներու պարագլուխները երկրէն դուրս
հանին։ Անոնք մեծ զօրաւորութեամբ հա-
մոզեցին Սէլիմ աղան, որ չէր ուզէր հե-
ռանալ իր Ալիին գերեզմանէն, և առին բե-
րին Պոլիս, Սուլթանին մայրաքաղաքը։
Սուլթանը շատ սիրով ընդունեցաւ զինքը,
վասնզի կը վախնար, գիտեր թէ ինչքա՛ն
մեծ էր Սէլիմի ազդեցութիւնը Արաբիոյ բո-
լոր ցեղերուն վրայ։ Անոր շնորհեց կառա-
վարական բարձր պաշտօն, և նուիրեց ըս-
քանչեղ չէրքէզուհի մը։

Ժամանակէ մը ետքը՝ նա ունեցաւ իր
այդ նոր ամուսնութենէն մանչ տղայ մը՝
զոր թալաթ անունեց։ Շուշանի պէս ըս-
պիտակ մօրմէ ու գիշերուան պէս սև հօրմէ
ծնած այդ թալաթայր գանգրահեր մանուկը
հրեշտակի պէս գեղեցիկ էր սակայն։

Շատ անգամ Սէլիմ աղան զայն առած
իր ծունկերուն վրայ, կը խօսէր, անոր իր
երկրի խորհրդաւոր ու անուշ բարբառովը,
և տղան առանց հասկնալու թէպէտ, մտիկ
կ'ընէր հօրը դէմքին լուրջ ու տխուր ար-
տայայտութենէն կարծես ազդուած։

Սէլիմ աղան կը պատմէր փոքրիկ թալա-
թին՝ Ալիի եղբրական մահը, և օրանէն
կը սովորեցնէր աղուն վրէժնորդը ըլլալ իր
եղբոր արեանը...։

Զմիթթարուեցաւ երբեք ան իր ծերու-
թեան օրերուն մէջ, ո՛չ իր թալաթովը՝ զոր
կը պաշէր սակայն, և ո՛չ իր նորածին Ապ-
տուլլահովը։

Կարօտ՝ հայրենի երկրին, ուր Ալիի մար-
մինը կը հանգչի, մտախոհ ու թաղծալից,
նարկիկէին փողը բերին, պատուհանին առ-
ջև ծալապատիկ նստած, երպոյն աչքե-
րով կը նայի հեռուն, մտքովը սուրբով
դէպի աւաղի ու արեւի այն խորհրդաւոր

ասպատան մը ունի, կ'երեւի բեղի պա-
րիկի վէպերուն զիւցաղներուն կերպով և կը
զիւթ զքեզ ճիշտ այն ժամուն երբ վհա-
տութիւնը մօտ է զքեզ գրաւելու։

«Ու դուն, սիրեցեալ անմեղ քոյր իմ,
դուն այս ամենը բարի, արդար ու բնական
կը գտնես, ու մտքեդ անգամ չ'անցաւ թէ
կրնար ըլլալ որ այդ տուրևադին մէջ քեզմէ
ամենէն թանկազին բանդ վրայ երթա՛ր...
որ յաւիտեան կորսնցունէիր կեանքիդ հա-
րիստը և երջանկութիւնը։

«Աստուած տայ որ սխալմ, ու զեպ-
քերը ապացուցանեն որ իմ մտատանջ խա-
ղապատանքս մոլորեցուցած էր զիս. բայց
և այնպէս չի պիտի ցաւիմ այդ մասին, եթէ
հաւատարմ ըլլամ որ վիշտէ մը ապատեցի
քեզ, եթէ մաքէտ անգամ չ'անցած այս բա-
ներուն գաղափարը՝ զոր այժմ քեզի կ'ըսեմ

աշխարհները՝ զորս բոնի թողեր եկեր էր
մեր երկիրը, որը սառուցի՛լ ու տխուր կը
դառնէ իր սգաւոր սրտին պէս...։

ՄԱՌԻ

ՖՐԱՆՔՈ-ԹՐԲԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՊԸ

(ՔԱՂՈՒԱԾ ԻՏԱԼԱԿԱՆ ՍՈՒՐՃԱՆԴԱԿԷՆ)

ՀՈՌԹ, 3 Նոյ.— Թիւրքոյն բա-
րեզան թղթակիցը կը հաւաստէ թէ Պրան-
սա՝ Լօրանտօի և թուականի և ուրիշ առ-
կախ խնդիրներու պահանջներուն կարգադ-
րութենէն զատ հետեւեալները պիտի պա-
հանջէ թուրքիւնը։ 1.— Յարգել Պարսոյի
զաշնապրութիւնը որ կը տրամադրէ որ թու-
նուղի անցագրիները վաւերական ճանչցուին
ի Տաճկաստան։ 2.— Օրինական արտօ-
նութիւններ տրուին Արեւելի Ֆրանսական
պարսկերէն, որ այժմ գոյութիւն ունին
իւրև առանձնաշնորհալ հաստատութիւններ։
3.— Պաշտօնական կարգապրութիւն մը
առկալ մնացած խնդիրներու։

Պրանսան՝ ստուցմէ շատ պիտի պա-
հանջէ նաւային ցոյցին համար եղած ծախ-
քերուն հատուցումը։ Որքան Սուլթանը ընդ-
դիմութիւն ցուցանէ, Պրանսայի պահանջ-
կոտութիւնը այնքան պիտի սաստիկանայ։

ԲԱՐԻՉ, 2 Նոյ.— Կը հաւաստեն թէ
Ռուսիա համաժող չէ իշխելի կամ Պէլյու-
թի մարզային հասոյթներուն գրաւման։ Ա-
սոր փոխարէն Զարին կառավարութիւնը խոս-
տացաւ իր բոլոր ազդեցութիւնը բանեցնել
Պոլսոյ մէջ՝ համոզելու համար որ Սուլթա-
նը Պրանսայի պահանջութեան տեղի տայ
Գալեար ծովակալին նաւախումբը տաճկա-
կան ջուրերուն մէջ հասնելուն պէս։

ԲԱՐԻՉ, 3 Նոյ.— Խորհրդարանական
ընթանակներու մէջ տարբեր տարբեր լուրեր
կը պտտին Արեւելի մէջ Պրանսայի բըռ-
նած ընթացքին մասին։ Զրոյցի մը համե-
մատ Ֆրանսական կառավարութիւնը նախա-
պէս համաձայնած է Ռուսիոյ և Գերմանիոյ
հետ առանց իսկ խորհուրդ հարցնելու Անգ-
լիոյ և Իտալիոյ։

ԲԱՐԻՉ, 2 Նոյ.— Էթո Տրե-Բարի կ'ը-
սէ թէ Սուլթանին շատ փոյթը չէ Միտիւ-
լի գրաւումը որուն բնակիչներուն մեծագոյն
մասը յոյներ են։ Ընդհակառակը, ամեն
նախազգուշութիւն ձեռք առած է ընդժով-
եայ թորփիլանաւերով պաշտպանելու հա-
մար Պէլյութի, Իզմիրի, Սեւանիքի և Տար-
տանէի մուտքերը։

ԲԱՐԻՉ, 2 Նոյ.— Մարթէն լրագրի
Լոնտոնի թղթակիցը կը հեռագրէ թէ Բ.
Դուրը բանակցութեան մէջ է Օմանեան

մանէ քու սրտիդ մէջ և առաջնորդ ըլլայ
քիզի այն շաղուին մէջ որուն պարտիս հե-
տեղի. եթէ, իմանալով որ կարելի է թէ
պայքար մը ունենաս մղելիք, այժմէն պատ-
րաստուիս անոր։

«Քու պարտականութեանդ վրայ չ'պիտի
խօսիմ քեզի, Ժէրմէնս։ Անուան պատիւը,
որ հիմա մեր միակ հարստութիւնն է, պի-
տի գիտնաս պահպանել զայն, գիտեմ.
բայց այդ բաւական չէ, կը հասկնաս։
Պէտք է որ քեզմէ բան մը, բնաւ բան մը
չ'անցնի այդ մարդուն. չա՛ն անոր ուղե-
ղիդ մէկ մտածումն իսկ, սրտիդ մէկ բա-
բախումն անգամ։

«Եթէ զգաս որ կը տկարանաս, դարձիւր
հոս։ Պատրաստ եմ քեզ ընդունելու. աղ-
քատութենէն չեմ վախնար ամենակին։

«Եթէ Աստուած յաջողցնէ, քեզի արժաւ.

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՄԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ — ԳԱՀԻՐԷ, ԱԹԱՊԱ-ԷԼ-ԻԱՏՐԱ, ՆԱԽԿԻՆ ԶԱՊ ԹԻՅԷԻ ՇԷՆԳԻՆ ԴԷՄ

պանքային հետ երկու միլիոն ոսկւոյ փոխառութիւն մը կ'ընելու համար:

ԲԱՐԻՉ, 2 Նոյ.— Լա Բարրի հաւանական չի նկատեր թէ Գայնարի նաւախումբը իզմիրի նաւահանգիստը մտնել փորձէ, որուն ջուրերը շատ ցած են ատանկ խոշոր մարտանաւերու համար: Նաւարաժ, նին Պէյրութ երթալը աւելի հաւանական է:

Բարրի կը յաւելու թէ Ֆրանսայի ալ իր բն հոգային հատուցում մը Սուրիան տալու է քանի որ Անգլիա թրանսպորտ ձեռք անցուց և Ռուսիա՝ Մանչուրիին:

ԲԱՐԻՉ, 2 Նոյ.— Էմբրագիստմի մէջ Պ. Ռոշֆոր ծովային այս ցոյցին վրայ խօսելով կընէ թէ «առիկայ պարզապէս չը նորհեցով ծովահանութիւն մըն է քանի որ նպատակն է պաշտպանել՝ վաշխառուական և կասկածելի պահանջներու վճարումը»:

Պ. Ռոշֆոր՝ Թալմի մէկ կէս—պաշտօնաւան յօդուածին վրայ խօսելով ուր ըստած է թէ «Ֆրանսան շարագոյնը տնտեսական կրնար դանել ինքզինքը ցուցունելու համար: Պէտք է գիտնալ թէ քանի մը առկա խնդիրներու կարգադրութիւններէ աւելի մեր նպատակն է վերահաստատել Արևելքի մէջ՝ մեր ազդեցութիւնը»:

Պ. Ռոշֆոր սա պէս կը վերջացնէ իր քննադատութիւնը:

«Քանի որ Լորանսայի, Թուպինի, և Կոստէի պահանջներուն վճարումը ուղիւ համար չէ որ Գայնար ծովակալի պաշտօն տրուեցաւ: Պոլիսը ուրախակոծել, այլ մեր ազդեցութիւնը աւելի շնչաւոր համար, ինչու ուրեմն ուրիշ ծովակալ մը չէք զրկեր Տուլքը ուրախակոծելու քանի որ Անգլիոյ մէջ ալ մեր ազդեցութիւնը նաւազ վտանգուած չէ քան ի Թուրքիա: Եթէ զենք ի ձեռին աւան տեղ մտնելով մենք զմեզ յարգել աւելու ելլենք, աշխարհիս հինգ մասերուն հետ ալ գործ պիտի ունենանք:

«Եթէ Արևելքի մէջ մեր միջամտութիւնը պէտք էր, կէս միլիոն ծովորդներն մը բընալին ըլլալը առիթ մընէր՝ որմէ լաւագոյնը դանել անկարելի է»:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Հինգշաբթի առաւ ժամը եօթն ու կէսին Ն. Բ. Խտիլը մասնաւոր կառավարմամբ Աղեքսանդրիայէն մեկնեցաւ և ժամը 11 ու կէսին Գահիրէ հասաւ: Նորին Բարձրութեան կ'ընկերակցէին նախարարապետ Մուսթաֆա փաշա Ֆէհմի, նախարարները, երեսօտական խորհրդականը, Ահմէտ Չէքի

նի լաւ ամուսին մը կը գտնեմ քեզի: Ահա այդ բարի երիտասարդին պէտք է որ պահան հոգեւոր բոլոր գանձերը, երիտասարդութեանդ հրապոյրը. ամուսին կըլլաս, մայր կ'ըլլաս, ու այն ատեն, անուշիկս, վեպերուն, բայց այս անգամ իրական վեպերուն մէջ եղածին պէս, շատ մը զաւակներով ամենքս ալ երջանիկ կ'ըլլանք:

«Այս ուրախ գուարթ յոյսին ակնկալութեամբ, կը բաժնուիմ քեզմէ, բարի բոլորս, պաղատելով որ ներքեւ ինծի եթէ վշտացուցի քեզ և գորովալից կաթոգինս ողջագուրելով քեզ»:

«Միտակարար անձնուէր եղբայրդ,
«ՄԱՐՍԷԼ»

Այս նամակը կարգաւ լեւրջը, Ժեմմէն տաքտապալոյդ եղաւ, աչքերը լեցուած, կուրորդ ցամաքած, անբացատրելի խռովութեան մատնուած:

փաշա, Եւսուֆ Չիա փաշա, Հասան Աւէմ փաշա, Մաճու փաշա Ֆէհմի և Տը Մարթինո փաշա: Պէտք եղած դիւորական պատիւները տրուեցան խտիլին մեկնած միջոցին: Փոմ—է—Տիք ամրոցէն 21 թիւն գանձի հարուած քաշուցաւ ի պատիւ իրեն:

Խտիլական կառավարման քանի մը վայրկեան կանգ առաւ Տամահուր, Թանթա, Պիրքէթ—է—Սապ, Պէհհա և ժամը 11 ու կէսին կայարան հասաւ:

Ն. Բարձրութեան զարուար ողջունեցաւ 21 թիւնութի հարուածով և զինուորական պատիւներէ ետքը Ն. Բ. Խտիլը իր աջ կողմը ունենալով Մուսթաֆա փաշա Ֆէհմի Սալտիկի պալատը ուղղուեցաւ:

—Հինգշաբթի օր, Արապի փաշա այցելութիւն մը տուած է Լորտ Բրոմբրի:

—Երէկ իրիկուն ժամը ութին, Օթէլ Գոնթիմանայի մէջ տրուեցաւ Սըր Բէն, նէ Ռոտի Եգիպտոսէն մեկնելու առթիւ սարքուած հացիկերով: Լորտ Բրոմբրի կը նախագահէր սեղանին:

—Էստուր Է. ի ծննդեան 60րդ տարեդարձին առթիւ արքայական հրետաճըգութիւններ պիտի կատարուին այսօր: Ասոր համար անգլիական զօրակը պիտի ծածանի Եգիպտոսի մէջ բրիտանական զօրութեան գլուած բոլոր տեղերուն վրայ: Դրանից բանակին բոլոր սլաշտնատեղիները պիտի գոց մնան այս առթիւ:

—Յառաջիկայ երկուշաբթի օր, Վիլքթոր Էմմանուէլ Գ. ի ծննդեան երեսուն և երկուրդ տարեդարձին առթիւ, Խաւիլոյ դիւանագիտական գործակալութեան և ընդհանուր հիւպատոսութեան վարիչ Կոմս Մանցոնի նոյն օրը ժամը 11էն մինչև 12 պիտի ընդունի Եգիպտոսական խաւաքիները:

—Երկուշաբթի առաւ ժամը 7 ու կէսին Սիբաուրը անձամբ պիտի քննէ Ալգա, սիէի Տըղ. զօրաբանակը, Գահիրէի պահապառքին միւս գունդերը և զինուորական պարոցին աշակերտները:

Սըր Բէնթոնալ Վիլկէյթ երկուշաբթի իրիկուն ժամը ութին խալիֆա պիտի մեկնի:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՐԻՉ, 6 Նոյ.— Ծովակալ Քաեա Միտիլիի մաքսերը գրաւած ըլլալը հեռագրած է Պոլսոյ ֆրանսական դիւանագիտական գործակալար Պ. Պաթի:

Ֆրանսան՝ յաւելուածական պահանջում

Ուրեմն եղբայրն ալ, Սթա Ապուհային պէս, կարգացած էր իր սրտին մէջ զգացում մը որ գոյութիւն չունէր. երկուքն ալ առանց համաձայն միտքանութեամբ զիրար ճանչնալու, կարծես ալ աւելի առաջ կը նետէին զինքը իր ճակատագրին ձախորդութեանը մէջ:

Ո՛չ, ո՛չ, կը սխալէին. Մուրատ չէր գըրաւել բնա իր միտքը: Երախտապարտ էր փաշային անոր իրեն շաղկապ բարեկեցութեան համար, ասկէ ուրիշ բան չկար:

Ինչու համար կը շարքիւնէին զինքը. ի՞նչ ըրած էր որ այսպիսի տկար կը կարծէին զինքը, իր սիրելիները հեռուէն ի գութ կը շարժէին, կը հարձափորձէին ու կ'ամբաստանէին զինքը այնպիսի բաներով զոր մտքն իսկ չէր անցունէր:

Եւ ոսկայն, Մարսէլի բովանդակ նամակէն՝ սպառնալիք մը կը կանգնէր: Այն վտանքը

նեք ներկայացուց Բ. Դրան և յայտարարեց իւր մինչև որ իր պահանջումներուն հիմնական կարգադրութիւն մը չըլլայ դիւանագիտական յարաբերութիւնները չպիտի վերահաստատուէ: (Ռ)

Օթիլ-Ալի, 6 Նոյ.— Քանաուայի կառավարութիւնը ծանոյց Անգլիոյ թէ ինչպէս որ անցեալ մայիսի պատրաստականութիւն ցուցուցած էր, նորէն պատրաստ կը գրտնուի հեծեալար զօրաբաժին մը զրկել ի Հարաւային Աֆրիկէ: (Ռ)

Կ. Պոլիս, 6 Նոյ.— Երէկ իրիկուն Բ. Դուրը ֆրանսական գործակալարին զրկեց ծանուցագիր մը որուն կցուած էին մաքսի հասցիներէն ամէն ամիս վճարելի պարտաւորականներ փոխան Լորանսայի և Թուպինի պահանջներուն: Դրամական ուրիշ առկա խնդիրներու մասին իր որոշումներն ալ յայտնեց: Ծանուցագիրը Բարիկ զրկուեցաւ: (Հ)

ԼՈՆՏՈՆ, 6 Նոյ.— Արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարութիւն մը հրատարակեց որով այս ձմեռ Եգիպտոս երթալ ուղղով ճամբորդներու կը վստահեցնէ թէ ծանուարտէ վախճալիք բնա բան չի կայ: (Ռ)

ԼՈՆՏՈՆ, 6 Նոյ.— Արտաքին մէջ մարզանքներ ընելու վրայ եղող 700 հեծեալ զօր՝ հրաման ստացան պատրաստ գրտնուիլ ամբողջ 15էն վերջը ճամբայ ելլելու համար. կը կարծուի թէ Հնդկական թընպանթաճիկ զօրքերու նոր խումբ մը ֆարպիտի երթալ:

Պատերազմական նախարարութիւնը տրամադիր կ'երեկ Քանաուայի հեծեալզօրներու Աֆրիկէ երթալու պատրաստականութեան օգտուելու: (Ռ)

ԲԷՐԼԻՆ, 6 Նոյ.— Լի—Հունկ—Չանկ հոգեւորաց է: (Ռ)

ԲԱՐԻՉ, 6 Նոյ.— Պ. Պաթ, Պոլսոյ ֆրանսական գործակալարը հրամայողական ծանուցագիր մը զրկեց Բ. Դրան նոր պահանջումներ ներկայացնելով և ի մասնաւորի պնդելով որ Ֆրանսայի պաշտպանութեան տակ գտնուող կրօնական հաստատութիւնները օրինաւորապէս ճանչցուին ի Թուրքիա:

ԲԷՐԼԻՆ, 7 Նոյ.— Լի—Հունկ—Չանկ մեռաւ: (Ռ)

ԼՈՆՏՈՆ, 7 Նոյ.— Բարիկէն Բալլիզի կիմացնէ թէ իսկ մը ֆրանսացիներ կերեւակային թէ Միտիլի ֆրանսական Կիպրոս մը պիտի ըլլայ որ պիտի իշխէ ոչ միայն Տարտանիլի նեղուցին վրայ՝ այլ ամբողջ Արևելքին և Սուէզի ջրանցքին:

որուն վրայ կը խօսէր ան, այն երկուզը զոր այնչափ կանխահոգ գործով կը պարզէր, կը զգար զանոնք որ սրտին մէջէն կանցնէին, զոգցես վիշտ մը կը զգար հիմայ՝ տեսնելով իր հօր վստահութեան անհետանալը:

Ինչու համար գրած էր իրեն... Բոլորովին խաղաղ ու անխռով էր ինքը իր հանդարտ տգիտութեանը մէջ: Աղէկ գիտեր որ ա՛լ լմցած էր իր հանգստութիւնը, թէ այլ ևս ամեն անգամ որ Մուրատը տեսնէր, ինքն իրեն պիտի ըսեր. «Կարելի՞ բան է... կը սիրէ զիս... ու եթէ կը սիրէ, իս ի՞նչ ընելու եմ...»:

Այսու ամենայնիւ, ուզեց որ անմիջապէս եղբորը սիրտը հանդարտեցնէ. նոյն օրը անոր պատասխան գրեց, ամեն ջանք ի գործ դնելով անոր ապացուցանելու համար թէ կը սխալէր. ու ինքը, այնչափ

Ըսա Տէյլի Թէյէկրաճի, Ֆրանսան բացատրած է միւս պիտութիւններուն թէ իր Թուրքիոյ հետ ունեցած միջակային մէջ աշխարհակարգութիւններ ընելու միտք չունի: (Ռ)

ԲԱՐԻՉ, 7 Նոյ.— Կառավարութիւնը ծանուցագրով մը իր պիտութեանը կը պարզէ որմէ կը հասկցուի թէ պիտաւորութիւն չունի Միտիլին միայնու կերպով գրաւելու և կը յաւելու թէ գահացուցիչ երաշխաւորութիւններ ձեռք անցուցածին պէս իր զօրքերը ետ պիտի կանչէ: (Ռ)

Կ. Պոլիս, 7 Նոյ.— Բ. Դուրը Ֆրանսայի ծանոյց թէ պէտք եղած արտոնութիւնը տուած է 16 եկեղեցիներու, վանքերու և կրօնական հաստատութիւններու վերաշինութեան և կամ նորոգման: (Ռ)

ԲԱՐԻՉ, 7 Նոյ.— Պ. Տէքաւէ՛ Երեսփոխանական ժողովին մէջ եղած յայտարարութեան յար և նման շրջաբերական մը զրկած է օտար պետութեանց, Ֆրանսայի Թուրքիոյ դէմ բռնած ընթացքին մասին:

Ամեն տեղ լաւ ընդունելութիւն գտած է այդ շրջաբերականը: (Հ)

ԼՈՆՏՈՆ, 7 Նոյ.— Լորտ Չարլս Պերէֆօրտի տեղ ծովակալ Վաթսըն երկրորդ հրամանատար կարգուած է Միջերկրականի նաւատորմին: Դեր—ծովակալ Համմիթ Ժովակալ Վաթսոնի կը յաջորդէ իրեն կառավարիչ Մալթայի զինուորական նաւահանգիստին: (Ռ)

ԼՈՆՏՈՆ, 7 Նոյ.— Լորտ Բրապօրն, Օթէլ Մէթրօքի մէջ ատենախօսելով յայտարարած է թէ Պոլսեցիք ուժը պակսած է և այժմ 10,000 հոգիէ կը բաղկանայ և ըսաւ թէ այլևս ժամանակը եկած է պատերազմելու իրաւունքը ձեռնուրնուն տունելու:

Եան Համիլթըն զօրավարը որ Լորտ Բիչնէրի սպառնալոյսին պետ անուանուած է շարաթ օր ճամբայ պիտի ելլէ: (Ռ)

Ա Ձ Դ

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԳԱԼԵՏԵՐ ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆ, արևելեան և եւրոպական երաժշտութեան մասնագէտ, Պոլսէն այս անգամ Գահիրէ եկած ըլլալով, պատրաստ է դաշնակի դասեր տալ, նորագոյն մէթոտով, իրեն զիմող աշակերտաց:

Փափաքողները պէտք է դիմեն Տիար Ս. Մահարեանի գրասենեակը, Պապ—է—Հատիտ փողոց թիւ 31:

Գ. Ե Ի Կ. Մ Ե Լ Ք Ո Ն Ե Ա Ն

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ
ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԹԻԹԻՑԷ — ԳԼԽԱԽՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԿԻՆ ՉԼԹԹԻՑԷԻ ՇԷՆԲԷ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐԻԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1843 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՁԵՐՆԵՐ

Ապահովագրական ամեն կարելի դրուժինները կը գո ծաղիւն. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զուական դրամագրութիւն, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՅԻ ռազմաբան և ապահովագրութեան զանազան գործիչները չունենաւ սիրած մի ապահովագրութիւն. — Առատաձեռն պայմաններու ճշդեկութեանց համար գիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՁԻՍ և Ժ. ՎԱԼՖԻՇ, Ընդհ. ներկայացուցիչը: Աղքատներու Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխավոր գործակալուտար. Գ. ԵԿԱՌՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՁԵՐՆԵՐ

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ Գ Ե Գ Գ Պ Տ Ո Ս

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՌ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, քննարկ փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ

Ձրանայի և օտար երկրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր

Կը դանձէ եզրագրութիւն և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր

Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կ'աւտորի պայմանաւած ամսվ մուծակներ կուտայ

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԿԻՈՅ ԳԻԾ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Այն շարքաւոր օր ժամը 4ին (յ. մ.) զէպի Բիւրէ, Իզմիր, Միտիլի և Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղքատնորիս ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամակ կ'ունենան շոգենաւները Բիւրէ հանգիստելու, Ալեքս. պոլսէլ:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻԾ. — Այն շարքաւոր օր ժամը 4ին (յ. մ.) զէպի Բօն-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպօլիս, Մէրսին և Իսկէնտէրու:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղքատնորիս ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տասնըհինգ օրը անգամ մը՝ երթեկ կարմիր

Ծովու հետեւեալ նաւահանգիստներու միջև. ՃԻՏՏԷ, ՍՈՒՌԻՆ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանայ համար դիմել Ընկերութեան Աղքատնորիս, Բօն-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրի ամեն մամնահանգներուն:

1-1902

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻԻՇԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՅԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԷՆԵՐՈՒ

ԷԳՆԻՐԷ, Մուսի փողոց,

Ս. և Ս. Սիսեալիի վաճառատան դէմը

Ապրանայ զանազանութիւն


Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճիւ հաւաքածոյ Ամերիկեան և Յրանսական Փոնօկրաֆներու

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:

ԱՅՏԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ



ԱՐԾԱԹ

ՅԱՅԱԼ

ԲԱՐԻՋ

1900



ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ՅԱՅԱԼ

ԱՐԱՆՑ

ԿԻՆԵՐՈՒ

ԵՒ

ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ

ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

ԸՍՏ ՎԵՐՁԻ ՆՈՐԱՅԵՒՈՒԹԵԱՆ

ՉԱՓԱՌ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ

—X—

—X—

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՒ — ԳԱՀԻՐԷ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏԻՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի յէջ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՕԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ

Հետեւեալ նոր և աւանակարգ շոգենաւներով

ԱՆԲԸՐԷՕՐ ՆԻՔՕԼԱ. արդթ. թօն. 5500	ՉԻՒԱՅՈՅ տարողութիւն թօնօ 5500
ԲԷՆ ՕԼԿԱ " " 5500	ՉԱՐ " " 5500

ՇԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղքատնորիս զէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ՕՏԷՍԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ՇԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղքատնորիս զէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ՕՏԷՍԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Աղքատնորիս, Թիքասաւ փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով 25 Յունվար 1898

Դրամագրութիւն Մեզ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.

Ընդ. կեդրոն ի Գահիրէ. Մամնահիւրը.

Աղքատնորիս, Մամնահիւր, խաբութիւն. Եզրագրական Աղքատնորիս Դրամատունը կը դունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴԹՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ. հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն է սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ամեն ճաշէ վերջ ՐԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու գեղէն մէլիքի քիչ առնել:

ՐԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ արիւշ ալքոլային գեղբու նման չի խոնգարեր ստամբուր:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ: